ԿԱՐԾԻՔ

«ԼԵՌՆԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Ժամանակակից կրթության հաջողության գրավականը աշակերտների շրջանում ինչպես տարբեր գիտակարգերից գիտելիքների և կարողությունների, այնպես էլ կյանքի հմտությունների ձևավորումն է:

Կրթության հիմքում մշտապես ընկած է լինում նաև տվյալ երկրի, պետության համար առաջնահերթություն հանդիսացող ոլորտներին վերաբերելի կարողությունների և հմտությունների ձևավորումը, որոնց թվին են պատկանում նաև լեռնագնացության հմտությունները: Ուստի «Լեռնագնացության հմտությունները» ծրագրի արդիականությունը և այժմեականությունը կասկած չի հարուցում:

Ներկայացված ծրագիրը համապատասխանում է կրթության արդի պահանջներին:

Ծրագրում ներկայացված են ուսումնասիրվող թեմաները, դրանց յուրացնելու համար անհրաժեշտ ժամաքանակը, դասի ձևը: Տվյալ գիտակարգի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի ստացված գիտելիքները, կարողությունները և հմտությունները հետագայում կիրառել մասնագիտական գործունեության մեջ:

Ծրագրի իրականացումը կարևոր է երեխաների ռազմահայրենասիրական դաստիարակության, առողջ ապրելակերպի խթանման, ֆիզիկական վիճակի բարելավման, կամքի և դիմացկունության ձևավորման, բնապահպանական խնդիրների լուծման, տեղանքում կողմնորոշման, ինչպես նաև այլ հմտությունների և կարողությունների զարգացման տեսանկյունից:

Ներկայացված ծրագրի մեջ կարևոր է այն հանգամանքը, որ նախատեսվում են նաև գործնական մարզումներ, ինչը միանշանակ կնպաստի տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունների ամրապնդմանն ու կատարելագործմանը: «Ալպինիզմի և լեռնային տուրիզմի հայկական ֆեդերացիայի» կողմից ներկայացված

ծրագրով առաջարկվող թեմաները նպատակահարմար է դասավանդել 12-14 տարեկան աշակերտներին, երբ ձևավորվում են այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, ինքնակատարելագործումը և այլ նորագոյացություններ: Ընտրված թեմաները այն ամբողջությունն են, որի վերջնարդյունքում հնարավոր է հասնել նախանշված արդյունքների: Լեռնագնացության վերաբերյալ այս ծրագիրը կարծես լրացնում է նախնական զինվորական պատրաստության և ֆիզկուլտուրա առարկաները:

Ներկայացված ծրագիրը ունի տրամաբանական կառուցվածք, համապատասխանում է մեթոդական պահանջներին և կարող է դասավանդվել դպրոցում:

Չնայած ծրագրի բովանդակային և կառուցվածքային համապատասպանությանը, անհրաժեշտ է ծրագրում հստակեցնել վերջնարդյունքները՝ գիտելիք, կարողություն, հմտություն, ինչպես նաև տվյալ ծրագրի ուսումնասիրման համար անհրաժեշտ նախապայման առարկաների ցանկը:

Ներկայացված ծրագիրը համապատասխանում է կրթական ծրագրերին ներկայացվող պահանջներին:

ՀՖԿՍՊԻ ուսումնագիտական գծով

պրոռեկտոր՝ Լ.Ս.ՍՏԵՓԱՆՅԱՆ